Աստված Քեզ Անձամբ Սիրում է

Ի՞նչպես է Աստված հոգում մեր կարիքները (Մաս 4)

«Հավիտենական սիրով եմ սիրել քեզ, դրա համար ողորմությամբ քեզ դեպի ինձ քաշեցի։» Երեմիա 31:3

«…որպեսզի բոլոր սրբերի հետ կարողանաք հասկանալ, թե ի՛նչ են լայնությունը և երկարությունը, բարձրությունը և խորությունը, ճանաչեք Քրիստոսի սերը, որ գերազանցում է ամեն գիտություն, որպեսզի Աստծու ամբողջական լիությամբ լցվեք։» Եփեսացիներին 3:17-19

«…Աստված սեր է…» Ա Հովհաննես 4:16

«Տերն է իմ հովիվը, և կարիք չեմ ունենալու։» Սաղմոսներ 23:1

Եհովա Ռոյի - "Ես եմ քո Հովիվ Աստվածը"

«Ես եմ բարի հովիվը. բարի հովիվը իր կյանքն է տալիս ոչխարների համար։» Հովհաննես 10:11

Կարող եմ կարոտություն չունենալ որովհետև

* Աստված ինձ ճանաչում է, և դարձյալ սիրում է

«Ես եմ բարի հովիվը, և ես ճանաչում եմ իմ ոչխարներին, ու նրանք էլ ճանաչում են ինձ։» Հովհաննես 10:14

«Ձեր գլխի ամեն մի մազն էլ հաշվված է։» Մատթեոս 10:30

«Տերն արդար է իր բոլոր ճանապարհների մեջ և ողորմած է իր բոլոր գործերում։» Սաղմոսներ 145:17

«Ձեր ամբողջ հոգսը նրա վրա՛ գցեք, որովհետև նա ձեզ հոգ է տանում։» Ա Պետրոս 5:7

* Աստված նույնիսկ պաշտպանում է ինձ

«…քո ողորմությունն ու հավատարմությունը թող միշտ պաշտպանեն ինձ։ Որովհետև անթիվ չարիքներ են պատել ինձ, իմ անօրենությունները հասան ինձ վրա.» Սաղմոսներ 40:11-12

«Հավիտենական Աստվածն ապավեն է, Դու հավիտենական բազուկների տակ ես.» Բ Օրենք 33:27

« (Ոչինչ)…չեն կարող մեզ բաժանել Աստծու սիրուց, որ մեր Տեր Հիսուս Քրիստոսի մեջ է։» Հռոմեացիներին 8:39

* Աստված ինձ առաջնորդում է

«Ովքեր Աստծու Հոգով են առաջնորդվում, նրանք Աստծու որդիներ են։» Հռոմեացիներին 8:14

«Որովհետև ես գիտեմ այն խորհուրդները, որ խորհում եմ ձեր մասին,- ասում է Տերը,- բարօրության խորհուրդներ և ոչ թե չարիքի, որպեսզի ձեզ ապագա և հույս տամ։» Երեմիա 29:11

Ինչ եմ կարող անել այդ սիրո հանդեպ

1. **Ստացիր Աստծո սերը**

«Աստված մեր նկատմամբ իր սերը հայտնեց. երբ մենք դեռ մեղավոր էինք, Քրիստոսը մեզ համար մեռավ։» Հռոմ. 5:8

«Սակայն նրանց, ովքեր ընդունեցին նրան և հավատացին նրա անվանը, իշխանություն տվեց Աստծու որդիները լինելու։» Հովհաննես 1:12

2. **Լցվիր Աստծո սիրով**

«Ինչպես Հայրն ինձ սիրեց, այնպես էլ ես ձեզ սիրեցի. մնացե՛ք իմ սիրո մեջ։» Հովհաննես 15:9

3. **Աստծո սերը արտացոլիր մարդկանց**

«Ձեզ նոր պատվիրան եմ տալիս, որ սիրեք միմյանց. ինչպես ես ձեզ սիրեցի, նույնպես դո՛ւք միմյանց սիրեք։ Դրանով բոլորը կճանաչեն, որ դուք իմ աշակերտներն եք, եթե միմյանց նկատմամբ սեր ունենաք։» Հովհաննես 13:34-35

Հաջորդ քարոզի թեման:

«Ի՞նչպես ուրախությունով լի կյանք ունենալ»

Հովիվ Սարո Խաչիկեան